# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

## ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** 03 հունիսի **2025թ.**

2025թ-ի մայիսի 12-ից հունիսի 3-ը, ՀՀ, ք. Երևան, Ս. Վրացյան 73 հասցեում գտնվող ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի շենքում տեղի ունեցավ համակարգչային սարքավորումների և պարագաների ձեռքբերման ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25/2 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Մ. Մելիք-Բախշյան ՝ | ՀՀԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի ձեռքբերումների իրականացման գործընթացի ղեկավար, |
| Ն. Ասրյան՝ | ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական Ծրագրերի Կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի ձեռքբերումների իրականացման գործընթացի համակարգող, |
| Հ. Ղարիբջանյան՝ | ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի վերապատրաստումների իրականացման գործընթացի պատասխանատու համակարգող, |
| Ա. Կուլախսզյան՝ | Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն (ԿՏԱԿ) պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ, |
| Ա. Սայան՝ | Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) «ԱԲ ՍԵՐՈՒՆԴ» ծրագրի բովանդակության ղեկավար: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Մ. Մելիք-Բախշյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ա. Առաքելյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է վեց անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հինգ անդամները, բացակայում էր ՀՀ հանրակրթական դպրոցների համար ՏՀՏ (ինֆորմատիկա) լաբորատոր սարքավորումների ձեռք բերման նպատակով մասնագիտական աջակցություն ցուցաբերող մասնագետ Ա. Թադևոսյանը, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:

2. Ընթացակարգին հայտ ներկայացված մասնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:

3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների մասին:

4. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ որոշելու մասին:

5. Համակարգի միջոցով գեներացվող հայտարարություն/ներ/ի, անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների եվ հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

7. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ-ի մայիսի 12-ին, ՀՀ, ք. Երևան, Ս. Վրացյան 73 հասցեում գտնվող ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի շենքում ժամը 15:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված հետևյալ տեղեկատվությունը.

ՀՀ դրամ

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1 | Համակարգչային սարքավորումներ և պարագաներ 1 | 389,350,500.00 | 13.05.2025 15:00 | 479,796,000.00 |
| 2 | Համակարգչային սարքավորումներ և պարագաներ 2 | 199,215,000.00 | 13.05.2025 15:00 | 245,556,000.00 |

ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25/2 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԵՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25/2 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի | Հասցե, հեռ. | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|

| | անվանում | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Թումանյան 35/11; +37491401134 | interactive.stf@gmail.com | 00217998 |
| 2 | Պրոտեխ-ԻՏ-Ուկրաինա ՍՊԸ | 04052 Ուկրաինա, ք. Կիև, Գլուբոչիցկայա փողոց 40, տարածք 60; +380938582939 | protech.it.ukraine@gmail.com | 41860186 |
| 3 | Կոմպասս ՍՊԸ | ք.Երևան, Չարենցի 66; +374 10 52 37 37 | compassarmeps@gmail.com | 01545204 |
| 4 | Էֆ-Լայն Թրեյդինգ ՍՊԸ | Երևան 0018, ք. Երևան, Տիգրան Մեծ 27, 43 շինությունշին; +37491017030 | info@fline.am | 01537351 |

2025 թվականի մայիսի 13-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ՝ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25/2 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.

2. Ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

3. Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ.

Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում.

1. Չափաբաժին 1-ում Համակարգիչ 1-ի մասնակցի կողմից տրամադրված տեխնիկական բնութագրերում բացակայում է համակարգիչը, ստեղնաշարը և մկնիկը մեկ արտադրողից լինելու մասին տեղեկատվությունը:

2. Չափաբաժին 1-ում Համակարգիչ 2-ի տեխնիկական բնութագրերում մասնակցի կողմից ներկայացված հայտի առաջարկած տեխնիկական բնութագրում նշված է «Intel Core 7 12700K պրոցեսոր»: Հարկ ենք համարում նշել, որ այսպիսի պրոցեսոր գոյություն չունի «Intel»-ի պաշտոնական կայքում, իսկ Ձեր կողմից 21.05.24թ-ին տված պարզաբանման պատասխանում նշված արտադրողի պաշտոնական հրապարակված տեխնիկական բնութագրերում/Data sheet/ և կայքի հղման մեջ տվյալ համակարգչի համար նշված է «Intel Core i7 12700K», որը սակայն 2021 թվականի արտադրանք է և չի բավարարում մրցույթով պահանջվող Համակարգիչ 2-ի տեխնիկական պահանջներին:

3. 1-ին և 2-րդ չափաբաժիններում մասնակցի կողմից ներկայացվել է Epson PowerLite L210SF պրոյեկտորը, սակայն մեր Պրոյեկտորի արտադրողի/դիստրիբյուտորի կողմից տրամադրված երաշխիքային նամակը/MAF-DAF/ ներկայացնելու պահանջին, Ձեր կողմից 21.05.24թ-ին տված պարզաբանման պատասխանում ներկայացվել է այլ արտադրողի և այլ մոդելի երաշխիքային նամակը/MAF/՝ Viewstar արտադրողից:

4. 1-ին և 2-րդ չափաբաժիններում Պրոյեկտորի էկրանի մասնակցի կողմից տրամադրված տեխնիկական բնութագրերում բացակայում է արտադրողի և մոդելի անվանումները:

5. Չափաբաժին 1-ում մասնակցի կողմից ներկայացվել է Logitech BRIO Webcam with 4K Ultra HD Video & HDR Վեբ տեսախցիկը, սակայն մեր Վեբ տեսախցիկի արտադրողի/դիստրիբյուտորի կողմից տրամադրված երաշխիքային նամակը/MAF-DAF/ ներկայացնելու պահանջին, Ձեր կողմից 21.05.24թ-ին տված պարզաբանման պատասխանում ներկայացվել է այլ արտադրողի երաշխիքային նամակը/MAF/՝ SHENZHEN LIKE CREATIVE TECHNOLOGY CO., LTD արտադրողից: Ինչպես նաև վեբ տեսախցիկի Ձեր կողմից ներկայացրած տեխնիկական բնութագրերում բացակայում է տեսախցիկը պատին ամրացնելու հավաքածուի մասին տեղեկատվությունը և պահանջվող 3 մետր USB մալուխի փոխարեն տրամադրվում է 2,2 մետր երկարությամբ մալուխ, որն ընդունելի չէ:

6. Չափաբաժին 2-ում Համակարգիչ 1-ի տեխնիկական բնութագրերում մասնակցի կողմից նշված է «Intel Core 5 11260H» պրոցեսոր: Հարկ ենք համարում նշել, որ այսպիսի պրոցեսոր գոյություն չունի «Intel»-ի պաշտոնական կայքում, իսկ Ձեր կողմից 21.05.24թ-ին տված պարզաբանման պատասխանում նշված արտադրողի պաշտոնական հրապարակված տեխնիկական բնութագրերում/Data sheet/ և կայքի հղման մեջ տվյալ համակարգչի համար նշված է «Intel Core i5 11260H», որը սակայն 2021 թվականի արտադրանք է և չի բավարարում մրցույթով պահանջվող Համակարգիչ 1-ի տեխնիկական պահանջներին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ

2025 թվականի մայիսի 13-ին, Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները:

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ),

| Հ/Հ | Ներկայացված հայտեր | Նախահաշ վային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Կարգա վիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | Ընտրված մասնակից «X» |
| 1 | Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես ՍՊԸ | 479,796,000.00 | 389,350,500.00 | 20% | 467,220,600.00 | 231,000,000.00 | 20% | 277,200,000.00 | X |
| | Պրոտեխ-ԻՏ-Ուկրաինա ՍՊԸ | | 1165536 USD | 0% | 1165536 USD | 236,073,360.00 | 0% | 236,073,360.00 | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Կոմպասս ՍՊԸ | | 399,666,000.00 | 20% | 479,599,200.00 | 283,601,775.00 | 20% | 340,322,130.00 | |
| 2 | Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես ՍՊԸ | 245,556,000.00 | 202,818,000.00 | 20% | 243,381,600.00 | 141,000,000.00 | 20% | 169,200,000.00 | X |
| | Կոմպասս ՍՊԸ | | 204,462,000.00 | 20% | 245,354,400.00 | 144,000,000.00 | 20% | 172,800,000.00 | |
| | Պրոտեխ-ԻՏ-Ուկրաինա ՍՊԸ | | 596214 USD | 0% | 596214 USD | 147,993,844.00 | 0% | 147,993,844.00 | |
| | Էֆ-Լայն Թրեյդինգ ՍՊԸ | | 199,215,000.00 | 20% | 239,058,000.00 | 169,677,850.00 | 20% | 203,613,420.00 | |

2025 թվականի մայիսի 30-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:

2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2025 թվականի հունիսի 3-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Մասնակցի կողմից սահմանված ժամկետում և կարգով ներկայացվել են արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2025 թվականի հունիսի 3-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:

2. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով

3. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

4. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Գնահատման մեջ ներառված մասնակցի անվանումը* | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-2-րդ | Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես ՍՊԸ | բավարար |

*Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 4. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոնշյալը, 2025 թվականի հունիսի 3-ին Հանձնաժողովը որոշեց, որպես Ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 3-րդ կետով ներկայացված Աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի, ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ա. Առաքելյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ի նախագծերը:

2025 թվականի հունիսի 3-ին Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել համակարգի միջոցով գեներացվող հայտարարություն/ներ/ը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել համակարգի կողմից գեներացված և տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստերը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. 25.04.20252թ-ին Ընթացակարգի հրավերում տեղի է ունեցել փոփոխություն:

2. Գնման վերաբերյալ 08.04.2025թ-ին, 09.04.2025թ-ին, 22.04.2025թ-ին, 27.04.2025թ-ին և 05.05.2025թ-ին ստացվել են հարցումներ, որոնց տրվել է պարզաբանումներ համապատասխանաբար՝ 10.04.2025թ-ին, 23.04.2025թ-ին, 29.04.2025թ-ին և 07.05.2025թ-ին:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց համակարգի կողմից գեներացված և տրամադրված պայմանագր/եր/ի նախագծ/եր/ը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել համակարգի կողմից տրամադրված պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին համակարգի միջոցով ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Մ. Մելիք-Բախշյան ______________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ն. Աsրյան ______________

Հ. Ղարիբջանյան ______________

Ա. Կուլախսզյան ______________

Ա. Սայան ______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Առաքելյան ______________